ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ-ԲԾ-Ա-ԲՄԾՁԲ-26/43 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ և ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ

14.07.2026թ.
ժամը 12:00

Քաղ. Երևան

Մ.Մարտիրոսյան	-հանձնաժողովի նախագահ	Ծրագրի համակարգող
Շ.Միրաքյան	-հանձնաժողովի անդամ	Ծրագրի 3-րդ բաղադրիչի ղեկավար
Տ.Չիթչյան	-հանձնաժողովի անդամ	Ծրագրի 1-ին բաղադրիչի ղեկավար
Ա.Թովմասյան	-հանձնաժողովի անդամ	Հողերի դեգրադացիայի տնտեսագետ/փորձագետ
Բացակայում էր՝ Ռ.Զոբանյան	-հանձնաժողովի անդամ	ՇՄՆ ֆինանսատնտեսագիտական վարչության բյուջետային պլանավորման ծրագրերի և գնումների գործընթացների իրականացման բաժնի պետ

Տեղեկություն ՀՀ-ԲԾ-Ա-ԲՄԾՁԲ-26/43 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

ՀՀ-ԲԾ-Ա-ԲՄԾՁԲ-26/43 ծածկագրով գնման ընթացակարգի նախաորակավորման փուլի հրավերները բացվել են 2026 թվականի հուլիսի 7-ին ժամը 14:00:

Կողմ՝ 4
Դեմ՝ 0

Տեղեկություն ՀՀ-ԲԾ-Ա-ԲՄԾՁԲ-26/43 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման մասին

2026թ-ի հուլիսի 14-ին «Շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գրասենյակում, որը գտնվում է ք. Երևան, Տիգրան Մեծ 65Ա հասցեում, տեղի ունեցավ **ՀՀ-ԲԾ-Ա-ԲՄԾՁԲ-26/43** ծածկագրով («Սևանա լճի ավազանում հողային ռեսուրսների և արժեքավոր էկոհամակարգերի պահպանում և կայուն կառավարում՝ ուղղված բազմակի օգուտների» դրամաշնորհային ծրագրի ագրոբնապահպանական վճարումների սխեմայի (AEPS) միջազգային խորհրդատուի ծառայության ձեռքբերում) գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է 5 անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի 4 անդամները, հետևաբար՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Մ.Մարտիրոսյանը, իսկ քարտուղարն էր՝ Ա.Հակոբյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. **ՀՀ-ԲԾ-Ա-ԲՄԾՁԲ-26/43** ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտ ներկայացրած անձանց, վերջիններիս կողմից ներկայացված հայտի գնահատման մասին
2. Ընտրված /և հաջորդաբար տեղեր զբաղեցրած/ մասնակից որոշելու մասին
3. Նախաորակավորված ցանկում ներառելու մասին

ՀՀ-ԲԾ-Ա-ԲՄԾՁԲ-26/43 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ, ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ և ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Մ.Մարտիրոսյանը նիստը հայտարարարեց բացված և հրապարակեց գնման նախաորակավորման փուլի հայտով սահմանված գնման առարկայի պահանջները:

ՀՀ-ԲԾ-Ա-ԲՄԾՁԲ-26/43 ծածկագրով երկու փուլով ընթացակարգի վերաբերյալ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով սահմանված հիմնավորումներ չեն ստացվել:

Հայտերի վերաբերյալ պարզաբանում տեղի չի ունեցել:

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

ՀՀ-ԲԾ-Ա-ԲՄԾՁԲ-26/43 ծածկագրով ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ է/են/ ներկայացրել հետևյալ անձը/ինք/ այսուհետ՝ նաև մասնակիցը/ները//.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Հասցեներ	Հեռախոսահամար և էլ հասցե
1	Դանիել Բոգներ /Daniel Bogner/	Morogasse10, 9020 Klagenfurt, Austria	+4369910218389
2	Իվանա Հրիստովսկա /Ivana Hristovska/	ivana.hristovska@gmail.com	+38971906616

Հանձնաժողովը արձանագրեց, որ

- Մասնակից/ներ/ը հայտ/եր/ը կազմել և ներկայացրել են **ՀՀ-ԲԾ-Ա-ԲՄԾՁԲ-26/43** ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան
- Դանիել Բոգներ /Daniel Bogner/ ներկայացրել է Հարվերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:
- Իվանա Հրիստովսկա /Ivana Hristovska/ ներկայացրել է ինքնակենսագրականը, որտեղ ներկայացրած են կատարած ծրագրերի և ծառայությունների ցանկը, սակայն

բացակայում են կատարած պայմանագրերի պատճեները և կատարման մասին վկայող փաստաթղթերը: Կրթական որակավորումը չի համապատասխանում տեխնիկական բնութագրի որակավորման պահանջներին:

•

Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 8-րդ կետի

8. Եթե երկու փուլով մրցույթի անցկացման նպատակով կազմակերպված նախաորակավորման ընթացակարգին հայտ է ներկայացրել մինչև երեք մասնակից, ապա գնահատող հանձնաժողովի որոշմամբ կարող է՝

1) նախաորակավորման հայտարարությունը վերահրապարակվել.
2) կազմակերպվել նախաորակավորման նոր ընթացակարգ.
3) նախաորակավորման ընթացակարգը չկայացած հայտարարվել.
4) շարունակվել գնման գործընթացը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մասնակիցները երկուսն են, որոնցից մեկի կրթությունը չի համապատասխանում է պահանջներին, գնահատող հանձնաժողովը որոշեց կազմակերպել նոր ընթացակարգ: **ՀՀ-ԲԾ-Ա-ԲՄԾՁԲ-26/43** ծածկագրով ընթացակարգը հայտարարել չկայացած:

Կողմ՝ 4
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝
Մ.Մարտիրոսյան

Հանձնաժողովի անդամներ՝

Տ.Չիթչյան

Շ.Միրաքյան

Ա.Թովմասյան

Հանձնաժողովի քարտուղար՝
Ա. Հակոբյան